



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեռյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայոց եկեղեցու պատմության մեջ առանձնահատուկ կարևորություն ունի Հայաստանում պատկերամարտական շարժման մանրակրկիտ ուսումնասիրությունը՝ երևույթի բազմաշերտ և համակողմանի քննությամբ: Ժամանակի ընթացքում քրիստոնեական եկեղեցու պատմության մեջ ծագել են բազմաթիվ շարժումներ, որոնց ծագումը պատահական բնույթ չի կրել: Հայ առաքելական եկեղեցին՝ որպես տիեզերական եկեղեցու մի մասնիկ, անմասն չի մնացել այդպիսի շարժումներից: Այդպիսի երևույթները աշխուժացնում էին իրենց գործունեությունը, երբ սրվում էին հասարակական հարաբերությունները, հասարակ ժողովրդի նկատմամբ ճնշումները և հարստահարումները: Առաջին երեք դարերում քրիստոնյաներն իրենց գաղափարներն արտահայտելու համար բավարարվում էին զանազան խորհրդանկարներով (ծուկ, նավ, քնար, աղավնի, խարիսխ և հատկապես խաչ): Վերջինս, ի հակակշիռ խաչը մերժող աղանդավորական ժամանակակից կեղծ քրիստոնեական մի շարք ուսմունքների, ունի աստվածաշնչական հենք (Մատթ. ԺԶ.24, Մարկ. Ը. 34, Ղուկ. Ը. 23): Պատկերների մասին Սուրբ Գրքում նույնպես հանդիպում ենք բազում վկայությունների, որոնք պարունակում են պատկերահարգության գաղափարական ակունքներ (Ելից ԻԶ. 31, Գ. Թագ. Զ 23-24, Եզեկ. ԽԱ. 18-20):

Դեռևս պատկերամարտներից առաջ քրիստոնյաներին պախարակում էին հրեաները՝ մեղադրելով նյութապաշտության մեջ: Հրեաները կարծում էին, որ քրիստոնյաները պատկերի բուն փայտին են երկրպագում՝ իբրև Աստծու: Նրանք ծաղրում էին քրիստոնյաներին այն պատճառով, որ վերջիններս հարգում են սրբերի մասունքները: Սրա մեջ նրանք տեսնում էին սոսկ ոսկրերի հանդեպ հարգանք: Կուսապաշտ էին կոչվում բոլոր նրանք, ովքեր համբուրում էին Քրիստոսի և Նրա ամենասուրբ Մոր կամ որևէ այլ սրբի պատկեր [1]: Ժամանակի ընթացքում պատկերներին վերագրվում է զորություն, իսկ այն նյութը, որով պատրաստվում և ձևվում էր պատկերը, համարվելով սրբազան, դառնում էր պաշտամունքի առարկա:

Այնուամենայնիվ, քրիստոնյա աշխարհում նկարներին վերագրվող հարգանքի աստիճանը միակերպ չէր: Պատկերամարտները դեմ էին ավետարանական բնույթ ունեցող նկարներին: Ըստ նրանց՝ կուսապաշտություն և սրբապղծություն էր Քրիստոսի, նրա աշակերտների և առհասարակ սրբերի պատկերումը: Պատկերամարտական հակումներ ունեցող շարժում ձևավորվել էր դեռևս առաջին դարում:

Բյուզանդական կայսր Լևոն Իսավրացու (717-741 թթ.) անձնական ցանկությամբ և հայացքներով առաջ եկած այս շարժումը՝ որպես հեթանոսական աշխարհայացքի

վերակենդանացում, իր արտացոլումն է գտել նաև Հայաստանում: Հայ եկեղեցին պատկերների վերաբերյալ որդեգրել է չափավոր մոտեցում: Այդ զուսպ մոտեցումը բնորոշ էր հայ եկեղեցու բոլոր հայրերին: Հայաստանում պատկերամարտական շարժումը տարածվում է գերազանցապես աղանդավորների մոտ: Այդպիսի աղանդներից էին մծղնեականները, պավլիկյանները և թոնդրակյանները:

Պատկերամարտությունը և պատկերահարգությունը Հայաստանում ծնունդ են առնում են հայ-բյուզանդական եկեղեցիների փոխառնչության համատեքստում: Նման երևույթների ներմուծումը տեղի է ունենում բացառապես գիտական ճանապարհով [2]: Այնուհանդերձ, հարկ է նշել, որ հայ եկեղեցին չգնաց ոչ մի ծայրահեղության՝ պահելով չափի զգացողությունը: Պատկերների հանդեպ որդեգրած մոտեցմամբ ավելի մոտ էր պատկերահարգությանը:

Պատկերապաշտությունը նախ և առաջ ընկրկեց խաչի պաշտամունքի ազդեցությամբ: Սրբապատկերների հարցում Հայոց եկեղեցու զուսպ դիրքորոշման պատճառը ժողովրդական ըմբռնման հետևանք էր, ըստ որի՝ և՛ պատկերամարտությունը, և՛ պատկերապաշտությունը խորթ երևույթ են, և միայն քաղկեդոնականներին է բնորոշ: Սա էր պատճառը, որ Հայոց եկեղեցին բավարարվում է պատկերամարտության խափանմամբ, ինչպես նաև անխոսությամբ շրջանցում է պատկերների քարոզչությունը և դրանց պաշտամունքի խրախուսումը:

Հայաստանում պատկերամարտական շարժման դրսևորումների մասին մեզ տեղեկություններ են հաղորդում մի քանի աղբյուրներ: Դրանցից է Վրթանես Քերթոզի «Յաղագս պատկերամարտից» նշանավոր աշխատությունը: Վրթանես Քերթոզը հայ եկեղեցական պատմության ականավոր դեմքերից է: Մաղաքիա Օրմանյանը, հիմք ընդունելով «քերթոզ» անվանումը, Սյունյաց վարդապետական նշանավոր դպրոցի աշակերտ է համարում նրան [3]: Երվանդ Մելքոնյանն իր «Վրթանես Քերթոզը և պատկերամարտությունը» աշխատության մեջ նշում է, որ «քերթոզ» մակդիրը նրան տվել են ուսումնական կարողությունների համար: Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի (574-604 թթ.) գահակալության ժամանակաշրջանում Վրթանեսը եղել է նրա օգնականը, իսկ երբ մահացել է վեհափառը, կաթողիկոսական տեղապահ է նշանակվում և 604-607 թթ., երբ հայրապետական գահը թափուր էր, վարում էր եկեղեցական գործերը: Հետագայում, երբ կաթողիկոսական աթոռին է հաստատվում Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսը (607-613 թթ.), Վրթանեսը շարունակում է կարևոր գործունեություն ծավալել հայ եկեղեցում: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ հայ և վրաց եկեղեցիների միջև վեճ էր առաջացել, ինչն էլ պատճառ դարձավ երկու եկեղեցիների պառակտման: Ըստ հիշյալ թղթի՝ պատկերները նախատեսված էին «Աստվածության փառքի պատվի և երկրպագության» համար [4]: Ինչպես գիտենք, պատկերամարտերը թշնամություն էին ցուցաբերում ոչ միայն պատկերների ու սրբերի մասունքների, այլև խաչին հանդեպ, մինչդեռ Վրթանես Քերթոզի մոտ հիշատակված պատկերամարտերը հարգում էին խաչը և երկրպագում: Հատկանշական են նաև եկեղեցի-

ներում պատկերվող նկարների թեմաները: Հայերին բնորոշ էր սրբերի հիշատակությունը: Հաճախ պատկերվում էին Քրիստոսը, Խաչը, նաև Աստվածածինը՝ առանձին կամ մանուկը գրկին: Հայ ժողովուրդը տարբեր վայրերում որմնանկարավոր եկեղեցիներ է ունեցել: Որպես նման եկեղեցիներ՝ հիշատակվում են Հոգյաց վանքի տիրամոր պատկերը, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին [2], Մրենը, Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչը [4]: Պատկերների արտացոլումը նկատելի է նաև գերեզմանաքարերի վրա: Կարևորվում էին նաև գունային չափորոշիչները՝ կարմիր, կանաչ, սև և կապույտ, որոնք երկրի չորս տարրերն էին խորհրդանշում՝ լույս, հող, ջուր և օդ: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ ոսկին նույնպես կարևորվում է՝ որպես գույնի վարդապետություն: Այն համարում է «անապական հինգերորդ էություն երկնից», որը վեր է բոլոր նյութերից [5]: Առհասարակ, մեր միջնադարյան եկեղեցիները, հատկապես 7-րդ դարում կառուցվածները, գլխավորապես որմնանկարվել են, որը խաթարվել է Հայաստանում արաբական տիրապետության հաստատմամբ: Պատկերապաշտությունը որպես դավանական և կրոնական վեճ, սերտորեն կապ ունի նաև արվեստի զարգացման պատմության հետ, քանի որ բնույթով դեմ էր նկարներին:

Նկարները երբեք աննպատակ չեն եղել: Պատկերների միջոցով փորձել են հավատացյալին ըմբռնելի դարձնել աստվածայինը, անհասկանալին և անտեսանելին: Պատկերապաշտության ի հայտ գալու գործում կարևոր է մի հանգամանք ևս՝ հեթանոսական կրոնի ազդեցությունը: Հարկ է նշել, որ պատկերապաշտության նախնական, ոչ խեղաթյուրված նշանակության պահպանման դեպքում այսպիսի երևույթներ տեղի չէին ունենա:

Պատկերամարտության մասին տեղեկություններ են պահպանվել նաև Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության՝ Մեծ Կողմանց Դավիթ եպիսկոպոսին ուղղված Հովհան Մայրազոմեցու թղթում [6], որին, սակայն, «Ո՛վ է, իրականում, հայոց Հովհան վարդապետը» հողվածում Ա. Մանուչարյանը միանգամայն պարզ կերպով ցույց է տալիս, որ խոսքը Հովհան Օձնեցու մասին է [7]: Ըստ Կ. Մելիքյանի՝ «Մայրազոմեցի» անունն ածական էր, որն առաջացել էր Մայրոց Գոմից: Այն Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսի (630-641 թթ.)՝ Մայրոց Վանք տեղանվան արհամարհաբար գործածած տարբերակն էր [8]: Հ. Քենդերյանը «Մայրազոմ» տեղանվան մասին մեկ այլ լուսաբանում է տալիս, և նշում նաև պարզաբանող հեղինակի՝ բյուզանդագետ Հ. Բարթիկյանի անունը: Նա նշում է, որ Մայրազոմը հունարեն «Մետրոկոմե» բառին է նման, որն էլ թարգմանաբար «Մայրավան» է նշանակում, և չի հիշեցնում գոմ բառի այսօրվա իմաստը [8]: 7-րդ դարի նշանավոր գիտնական, աստվածաբան, երգվյալ հակաքաղկեդոնական Հովհան Մայրավանեցու վերաբերյալ ստահող ու մտացածին պատմություններ են հորինել հայ երկաթնակները, ըստ որոնց՝ Հովհան Մայրազոմեցին հետագայում ընդդիմանում է հայոց կաթողիկոսին, որի պատճառը, առաջին հերթին, իր հերետիկոսական հայացքներն էին, այնուհետև՝ օգնության միջոցով հայոց կաթողիկոս դառնալու հույսը: Ճակատին «աղվեսադրոշմ» խարազանմամբ նա արքորվում է Կովկաս լեռը՝ կայացրած ժողովի

որոշման համաձայն: Հետագայում, սակայն, նա վերադառնում է հայրենիք և խոր ծերության մեջ վախճանվում Գարդման գավառում: Մինչդեռ իրականում Կարինի 633 թ. հայ-բյուզանդական համատեղ ժողովից հետո Հովհան Մայրավանեցին քննադատում է Եզր Ա Փռաժակերտցի կաթողիկոսին՝ ասելով, որ նա եզր տարավ հայոց առաքելական դավանանքը: Հալածվելով վեհափառի կողմից՝ միառժամանակ քաշվում է Կոտայքի Մայրավանք, որի պատճառով Եզրը նրան արհամարհաբար կոչում է Մայրագոմեցի: Քանի որ Մայրավանքը մոտ էր, և Հովհանին շարունակ հալածում էր Եզրը, ուստի, նա հեռացավ հայրենի Գարդման գավառ: Նրա՝ հայրենիք վերադառնալու մասին տարբեր կարծիքներ կան: Հովհան Մայրագոմեցի վարդապետի փոխարեն, սակայն, պետք է նկատի ունենանք Հովհան Օձնեցուն, ում դիմել էր Դավիթ եպիսկոպոսը: Այս հանգամանքի մասին է խոսում նաև այն փաստը, որ Հովհան Օձնեցին քաջատեղյակ էր աղանդներին և ունի հակաաղանդավորական գրվածքներ՝ «Ընդդէմ պաղիկեանց» և «Ընդդէմ երեւութականաց»:

Պատկերամարտության մասին տեղեկություններ պարունակող Հովհան վարդապետի նամակը բաղկացած է երկու մասից. մի մասը ներկայացնում է ժամանակակից իրադարձությունները, որոնք մտահոգել էին Մեծկվենից Դավիթ եպիսկոպոսին, իսկ մյուս մասում ներկայացվում է Հայաստանում Հեսու, Թադեոս և Գրիգոր անուններով մարդկանց քարոզչության մասին: Թղթում նշվում է. *«Ոմանք պատկերս ոչ ընդունին, ոմանք մկրտութին ոչ առնեն, ո՛չ աղ օրհնեն, ո՛չ պսակ դնեն հարսնեայ. յայս, եթե քահանայութին բարձեալ է յերկրես»* [6]: Այսպիսի մարդկանց գործունեության մասին Դավիթ եպիսկոպոսը հայտնում է Հովհան վարդապետին՝ խնդրելով հասկանալի դարձնել երևույթը:

Հայտնի է, որ Հեսու, Թադեոս և Գրիգոր քահանաները բաժանվում են եկեղեցուց [4] և հեռանալով մայրաքաղաք Դվինից՝ քարոզչության նպատակով հասնում Սյունիքի Սոթք գավառը: Հայոց կաթողիկոս Մովսես Եղիվարդեցին նրանց պարտադրում է վերադառնալ մայրաքաղաք՝ իր մոտ, բայց նրանք մերժում են կաթողիկոսի պահանջը: Այնուհետև կրկին քարոզչական նպատակներով տեղափոխվում են Արցախ և խոռվություն են առաջացնում աղվանների հարևան երկրում: Այնուհետև Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսի խնդրանքով Գարդմանա տերը նրանց ձերբակալում է և ուղակում Դվին, որտեղ այդ աղանդավորներին *«համոզելով դարձի են բերում»* [4]: Գարդմանի տիրոջ կողմից ձերբակալվելու փաստը խոսում է այն մասին, որ Արցախում քարոզչություն իրականացնելուց հետո շարժվել են հյուսիս՝ Ուտիք:

Մեզ հուզող խնդրի մասին պատահիկներ կան պահպանված *«Կանոնագիրք հայոց»*-ում: Այստեղ նշվում է մկրտության մասին [7]. *«Պարտ և արժան է զմկրտութեանն ձէթ քահանային արհնելմի ըստ միոջէ ընդ մկրտելն, ըստ բաւականի ժամուն պիտոյից եւ նոյնժամայն առմկրտեալսն մերձեցուցանելով՝ զարհնեալն սպառել, եւ մի՛ իշխել զմիանգամ արհնեալն բազում անգամ արհնել. եվ միայն աւծանել նովաւ զերեխայսն եւ զմկրտեալսն ընդ մկրտելն յաւազանին, եւ յայլ խորհուրդ աւծման մի՛ իշխեսցեն մատուցանել զնա»* [9]: Սրանից կարող ենք եզրակացնել, որ

Արցախի աղանդավորները մերժում էին մկրտությունը: Ի հակակշիռ սրան՝ «Կանոնագիրք հայոց»-ում հստակ նկատվում է նաև խաչապաշտության դրսևորումներ. «Եթե որ խաչ արասցե փայտեաց եւ կամ յինչ եւ իցէ նիւթոյ, եւ ոչ տացե քահանային արհնել եւ ւածանել զնա միռոտնավն արբով, ոչ է պարտ զնա ի պատիւ ընդունել կամ երկրպագութիւն մատուցանել, զի դատարկ եւ ունայն է յաստուածային զարութենէն եւ արտաքոյ ասանդութեան առաքելական եկեղեցոյ» [9]:

Թադեոսը՝ որպէս Հայաստանում պատկերամարտության քարոզիչ, հիշատակվում է և՛ Հովհան վարդապետի թղթում, և՛ Վրթանես Քերթողի մոտ: Եսային էլ կարող է նույնացվել Հեսուի հետ: Այս երկու անունները հայկական տեքստերում հաճախ շփոթությունների տեղիք էին տալիս: Այնուհանդերձ, պարզ հասկանալի է, որ երկու հեղինակների խոսքը նույն շարժման մասին է:

Հայաստանում պատկերամարտական շարժման գաղափարական կրողների՝ պավլիկյանների դեմ գործունեություն ծավալած Հովհան Օձնեցին իր «Ընդդէմ պառիկեանց» ճառում նույնպէս խոսում է մի շարժման մասին, որը Հայաստանում լայն տարածում էր գտել և որի գաղափարական ակունքներում պատկերամարտական հակումներ կային ու ուղղակիորեն պատվաստված էին պատկերամարտության հողի վրա [10]: Ըստ Հ. Քյետոյանի՝ այս աղանդի տարածման համար կարևոր հիմք է հանդիսացել ոչ միայն պատկերամարտական շարժումը, այլև իսլամի վտանգը: Բնական է, որ հայ եկեղեցին, իր ազգային-դավանաբանական խնդիրներից ելնելով, պետք է դուրս գար պավլիկյանների դեմ, որոնք, ըստ Հովհան Օձնեցու, նույն մծղնեականներն էին: Նրանք չէին կարողանում տարբերակել քրիստոնեական աստվածապաշտությունը և հեթանոսական բազմաստվածությունը: Խաչի պաշտամունքին և դրա կարևորությանն անդրադառնում է նաև Օձնեցին: Օձնեցին նշում է, որ նրանք, չընդունելով պատկերը, դեմ են կանգնում նաև խաչին: Խաչի պաշտամունքը համազգայնացվել էր 7-8-րդ դարերում և ուներ զարգացման նախընթաց շրջան [2]: Այս ժամանակաշրջանում խաչապաշտության և պատկերապաշտության միջև սկսվում է պայքար: Խաչի պաշտամունքը, որը իր նախնական ձևավորումը գտել էր 6-րդ դարում, հասնելով 8-րդ դար, առավել է մասսայականացվում: Քանի որ պատկերների պաշտամունքի հարցը այս նույն ժամանակաշրջանում էր հայտնվել, բնական է, որ պայքարում դրական արդյունքի կհասներ ժողովրդի մոտ առավել տարածում գտած երևույթը: Ե՛վ խաչապաշտությունը, և՛ պատկերապաշտությունը հասարակության միևնույն տիպի պահանջն էին բավարարում և ունեին նույն նպատակը: Երևութականությունը՝ որպէս պատկերամարտության կրող, գնոստիկյան երևույթ էր. դրա ջերմեռանդ հետևողները պատրաստ էին մոլորեցնել տգետներին:

«Կանոնագիրք հայոց»-ում ներկայացվող խաչի երկրպագության և օրհնության մասին տեղեկություններն անչափ կարևոր են: Սրան անդրադառնում է նաև Ա. Մանուչարյանը՝ վերոնշյալ հոդվածում նշելով, որ պատկերամարտությունը, ըստ Օձնեցու, կարող էր հանգեցնել «ի խաչամարտութիւն եւ քրիստոսապրեցութիւն, եւ անտուստ յանաստվածութիւն եւ դիւապաշտութիւն» [7]:

Պատկերապաշտության տարածման և զարգացման գործում այլ կարևոր հանգամանք էլ գոյություն ունի: Պատկերը, որը նախատեսված էր Քրիստոսի կյանքի պատմությունը ներկայացնելու, ժողովրդական շատ զանգվածների էր հասանելի: Այսինքն՝ պատկերի խորհուրդն ըմբռնելու համար անհրաժեշտություն չկար մեծ ճիգ գործադրելու: Սա հնարավորություն էր տալիս հասարակության բոլոր անդամներին՝ անկախ նրանց կրթվածության մակարդակից, հասկանալ պատկերի միջոցով բացատրվող թեմատիկան:

Պատկերի արդյունավետությունը պայմանավորված է ոչ թե նրա իրապաշտությամբ, այլ խորհրդով: Կրթվածության ցածր մակարդակ ունեցող հասարակության անդամներն էլ գերադասեցին իրապաշտությունը: Անհերքելի է մեկ փաստ՝ մանրանկարչությունը սկիզբ է առել հեթանոսական դարաշրջանում, սակայն յուրացվել է քրիստոնեական միջավայրում: Քրիստոնեական միջավայրում նկարչական արվեստի յուրացումը բացի հավատացյալներին բովանդակությունը մատչելի դարձնելուց, ուներ նաև այլ նպատակ՝ Ս. Գիրքը վայելույց կերպով զարդարել: Հայ եկեղեցում խորանները նույնպես ներկայացվում էին պատկերների տեսքով: Այս մտածումը բխեցնում էր երկու նախադրյալ. առաջինը զգայական, դրական զգացողությունն է, իսկ երկրորդը՝ խորաններում պատկերված նկարների ծածուկ իմաստը, որից էլ բխում է պատկերների խորհրդավոր էությունը: Հայ եկեղեցին պատկերների նկատմամբ որդեգրած իր առանձնահատուկ մոտեցմամբ կրկին ցույց տվեց իր յուրահատկությունը: Պատկերահարգությունը հայ եկեղեցու դավանանքի կարևոր մասը կազմեց և հետագայում էլ մնաց անսասան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Սեդրակյան Ա.**, Հայաստանեայց եկեղեցու պատկերյարգութիւնը, 1904, էջ 9:
- [2] **Սահակյան Ա.**, Միջնադարյան պատկերապաշտության հայկական տարբերակը, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, էջ 151, 150:
- [3] **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հատոր Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 689:
- [4] **Մելքոնյան Ե.**, Վրթանես Քերթոզը և պատկերամարտությունը, «Էջմիածին», 1970, էջ 94, 87:
- [5] **Ներսեսյան Ն.**, Աստվածաշունչը և հայ մշակույթը, Երևան, 2001, էջ 74:
- [6] **Կաղանկատուացի Մ.**, «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Երևան, 1983, Գլուխ ԽԶ, էջ 266-8:
- [7] **Մանուշարյան Ա.**, Ո՛վ է, իրականում, հայոց Հովհան վարդապետը, «Տարեգիրք», Զ, Երևան, 2011, էջ 117-122, 121:
- [8] **Մելիքյան Կ.**, «Narratio de rebus Armeniae» հայ քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան հայոց եկեղեցու պատմության սկզբնաղբյուր, Երևան, 2007, էջ 136:
- [9] **Քենդերյան Հ.**, Հովհան Մայրագոմեցի, Երևան, 1973, էջ 30:
- [10] «**Կանոնագիրք հայոց**», հատոր Ա, աշ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 520-1:

Գրիգորյան Նարինե

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ պատկերամարտություն, Հայ առաքելական եկեղեցի, խաչապաշտություն, պատկերահարգություն, դավանանք, խորհուրդ, հայկական, էություն, նյութ, մոտեցում:

Պատկերամարտությունը՝ որպես բյուզանդական ժողովրդական քրիստոնեության ծնունդ, իր արտացոլումը գտավ նաև Հայաստանում, որի վերաբերյալ, սակայն, Հայ առաքելական եկեղեցին որդեգրեց զուսպ մոտեցում: Հայ եկեղեցու դավանանքի մասը կազմեց պատկերահարգությունը, ըստ որի՝ ոչ թե պատկերի բուն նյութին էին երկրպագում, այլ խորհրդին: Իսկ պատկերապաշտության հայկական տարբերակը դարձավ խաչապաշտությունը, որն իր ամբողջ էությամբ դրսևորվում է նաև այսօր:

Григорян Нарине

ПРОЯВЛЕНИЯ ИКОНОБОРЧЕСКОГО ДВИЖЕНИЯ В АРМЕНИИ

Ключевые слова: иконоборчество, Армянская апостольская церковь, поклонение кресту, поклонение образам, вероисповедание, таинство, армянский, сущность, материал, подход.

Зародившись в византийском народном христианстве, иконоборчество нашло свое отражение в Армении, хотя Армянская апостольская церковь проявила к нему довольно сдержанный подход. Поклонение образам стало частью веры Армянской церкви, однако оно означало благоговение не перед самим изображением, а поклонение сущности таинства. Армянским вариантом поклонения образам стало обожествление креста, которое в полной мере проявляется и в наши дни.

Grigoryan Narine

MANIFESTATION OF ICONOCLASM MOVEMENT IN ARMENIA

Key words: Iconoclasm, Armenian Apostolic Church, reverence for the cross, worship, faith, sacrament, Armenian, essence, spirit, material, approach, treatment.

Originated in Byzantine national Christianity, Iconoclasm found its reflection in Armenia. However, the Armenian Apostolic Church showed a rather restrained approach towards that phenomenon. Worshipping was part of the faith of the Armenian Church, but it meant a reverence not for the image itself but for the essence of the sacrament. The Armenian version of worship of image was the deification of the cross, which is fully manifested nowadays.